«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Սուրբ Գ. Լուսավորիչ 9, Երևան 0015, ՀՀ
Հեռ. + 374 (11) 400 400
Ֆաքս + 374 (11) 400 401
էլ. փոստ info@ucom.am
www.ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
ԱՄԵՆԱԱՐԱԳ ՇԱՐԺԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԿԱ Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Վահագն Վերմիշյանին

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ԵԼՔ N 1886
«27» 11 2019թ.

Հարգելի՛ պարոն Վերմիշյան,

Սույնով տեղեկացնում ենք, որ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը 27.11.2019թ.-ին որոշում է կայացրել ընկերությունը «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին: Նշված որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ընկերությունում միջազգայնորեն ընդունված արդյունավետ գործող կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման և համապատասխան սկզբունքների կիրառման ապահովման նպատակահարմարությամբ: Կորպորատիվ կառավարման նոր համակարգի ներդրումն ընկերությունում թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել ընկերության կառավարումը, ինչն իր հերթին, անկասկած, իր ազդեցությունը կունենա ընկերության տնտեսական ցուցանիշների վրա:

Գործող օրենսդրության, ինչպես նաև փոխանցման ակտի համաձայն՝ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդ է հանդիսանալու «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունը, որին փոխանցվելու են ընկերության գույքը, այլ գույքային իրավունքները և պարտավորությունները:

Հարգանքով՝

«ՅՈՒՔՈՄ» գլխավոր տնօրեն

Հայկ Եսայան

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
5/9448-2019
«02» 12 2019թ.